ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ԲՆ-ԾՁԲ-19/04

ք.Երևան «25» «01» 2019թ.

Բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ.Ֆարամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **հոսթինգ ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Օգտագործել իրեն մատուցվող Ծառայությունը այնպես, որպեսզի չընդհատի, խոչընդոտներ չառաջացնի կամ չթերացնի Կատարողի ցանցով մատուցվող Ծառայությունները, չթերացնի այդ ցանցով հաղորդվող տեղեկատվության գաղտնիության պահպանումը, վնաս չհասցնի Կատարողին կամ Կատարողի Ծառայություններից օգտվող այլ անձանց, վտանգ չստեղծի մարդկանց կյանքի և առողջության համար:

2.2.4. Համագործակցել Կատարողի հետ, երբ այդպիսի համագործակցությունը անհրաժեշտ է ապահովելու համար Ծառայությունների մատուցումը և Ծառայությունների մատուցման հետ կապված խնդիրների վերացումը:

2.2.5. Չօգտագործել Ծառայությունը և/կամ Կատարողի ցանցը գործող օրենսդրության խախտմամբ կամ անօրինական նպատակներով:

2.2.6. Չառաջարկել իրեն մատուցված Ծառայությունը (հատուցմամբ կամ անհատույց) երրորդ անձանց, ինչպես նաև չօգտագործել այն այլ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու նպատակով:

2.2.7. Պահպանել Կատարողի բարի համբավը և առևտրային իմիջը սույն Պայմանագրի գործողության ընթացքում և սույն Պայմանագրի լուծումից հետո:

2.2.8. Ձեռնարկել բոլոր միջոցները հոսթինգի կառավարմանը վերաբերող տվյալները երրորդ կողմին հասանելի չդառնալու համար:

2.2.9. Անմիջապես տեղեկացնել Կատարողին հոսթինգի աշխատանքներին չարտոնված միջամտության կասկածների դեպքում:

2.2.10. Ըստ պահանջի 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին ներկայացնել փաստաթղթեր (բնօրինակներ և/կամ ըստ կարգի հաստատված կրկնօրինակներ), որոնք հաստատում են պատվերի ձևակերպման ժամանակ ներկայացված Պատվիրատուի վավերապայմանները:

2.2.11. Պատվիրատուն պարտավորվում է չօգտագործել վեբ-սերվերը հետևյալ անօրինական գործողությունների համար.

ա) Հայաստանի Հանրապետության և միջազգային գործող օրենսդրությանը հակասող ցանկացած տեղեկատվության պահպանում և/կամ տարածում.

բ) տեղեկությունների, ծրագրային ապահովման միջոցների հրապարակում և/կամ փոխանցում, որոնք պարունակում են վնասակար ծրագրեր և ունակ են խախտել համակարգիչների և/կամ համակարգչային ցանցերի աշխատանքը.

գ) գովազդային բնույթի զանգվածային չարտոնված էլեկտրոնային հաղորդագրությունների տարածում (spam), բացառությամբ այն դեպքերի, երբ հաղորդագրությունների տարածումն իրականացվում է ստացող կողմի բացահայտ համաձայնությամբ.

դ) հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի տարածում՝ առանց իրավատիրոջ համաձայնության.

ե) համակարգի աշխատանքների խափանմանը և/կամ կրկնագործարկմանը (restart) բերող գործողությունների իրականացում, ինչպես նաև Կատարողի ռեսուրսներին չարտոնված տիրապետման փորձ.

զ) ցանցային ծառայությունների և/կամ պրոցեսների ստեղծում, որոնք կբերեն Կատարողի սարքերի և/կամ կապուղիների ավելցուկային բեռնվածության:

2.2.12. Սույն Պայմանագրի 2.2.11 կետում բերված անօրինական գործողությունների ցանկն ամբողջական չէ, և Պատվիրատուի ցանկացած գործողություն, որն օրինականության կասկած կառաջացնի, կարող է որակվել՝ որպես անօրինական:

2.3.Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Պատվիրատուի կողմից Ծառայությունների արժեքը սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված կարգով չվճարելու կամ վճարումն ուշացնելու դեպքում Կատարողը սառեցնում է սույն պայմանագրով նախատեսված ծառայություն(ներ)ի մատուցումը՝ պահպանելով կայքի տվյալները վճարման վերջնաժամկետից հաշված 40 օրացուցային օր:

2.3.3. Ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը, եթե համարում է, որ այդպիսի քայլը անհրաժեշտ է պաշտպանելու համար իր ցանցը կամ իր հաճախորդների ցանցերը որևէ վնասակար ազդեցությունից և վերականգնել Ծառայությունները միայն իր ցանցի և/կամ իր հաճախորդների ցանցերի վրա այդպիսի ազդեցության պատճառների վերացումից հետո սակայն այդ մասին անմիջապես կամ, եթե հնարավոր է, կասեցնելուց առաջ տեղեկացնել Պատվիրատուին:

2.3.4. Կատարողն իրավունք ունի միակողմանի կասեցնել Ծառայության մատուցումը (դադարեցնել հոսթինգի աշխատանքը), եթե.

ա) Պատվիրատուն մասնակի կամ ամբողջովին չի կատարում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

բ) Պատվիրատուի վեբ-սերվեր չարտոնված մուտք հայտնաբերելու ժամանակ:

գ) Հոսթինգի ֆունկցիոնալությունը բերում է Կատարողի ծրագրային ապահովման և/կամ հեռահաղորդակցման ենթակառուցվածքների աշխատանքների խափանման:

2.3.5. Կատարողը վերսկսում է Ծառայությունների մատուցումը սույն Պայմանագրի 2.3.4 կետում բերված խախտումների ամբողջական վերացումից հետո:

2.4.Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դադարեցման օրից հաշված 6 ամիս իր պահեստային շտեմարանում պահպանել Պատվիրատուի կայքում առկա տեղեկատվությունը:

2.4.5. Ապահովել Ծառայությունների տեխնիկական սպասարկումը՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված №4-ով նախատեսված «Հաճախորդի աջակցման» կարգի:

2.4.6. Հնարավորության դեպքում անմիջապես տեղեկացնել Պատվիրատուին իր կողմում տեխնիկական կամ ծրագրային անսարքության, պատճառով առաջացած Ծառայության ընդհատման մասին:

2.4.7. Տեխնիկական պլանային աշխատանքների իրականացման դեպքում տեղեկացնել այդ մասին Պատվիրատուին այդպիսի աշխատանքները սկսելուց ոչ պակաս, քան 12 (տասներկու) ժամ առաջ: Հատուկ դեպքերում, երբ անհրաժեշտ է իրականացնել անհապաղ վերականգնողական աշխատանքներ, Կատարողը կարող է տեղեկացնել Պատվիրատուին այդ աշխատանքները սկսելուց անմիջապես առաջ:

2.4.8. Սույն Պայմանագրում սահմանված ժամկետներում ներկայացնել հարկային հաշիվներ և կանխավճարային վճարումների մասին հիշեցումներ:

2.4.9. Պահպանել Պատվիրատուի բարի համբավը և առևտրային իմիջը սույն Պայմանագրի գործողության ընթացքում և սույն Պայմանագրի լուծումից հետո:

2.4.10. Ապահովել հոսթինգի ֆունկցիոնալությունը Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում:

2.4.11. Տեղեկացնել Պատվիրատուին վեբ-սերվերի ծրագրային ապահովման նշանակալի փոփոխությունների մասին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №3):

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **200 000 (երկու հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1. Չորրորդ եռամսյակի մատուցվելիք ծառայությունների գումարը՝ **50 000 (հիսուն հազար) դրամ**, 2019 թվականի հոկտեմբեր ամսին որպես կանխավճար տրվում է Կատարողին, որը մարվում է մինչև նախատեսվող ծառայությունների ավարտը՝ Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված №2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է հատկացված ֆինանսական միջոցների դեպքում և կնքված համաձայնագրի հիման վրա:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի առջև Ծառայությունների ընդհատումների, խափանումների և որակական ցուցանիշների անկման դեպքում, որոնց ծագման պատճառները ընկած են Կատարողի վերահսկողությունից դուրս գտնվող տարածքներում, ինչը առանց սահմանափակումների ներառում է այն հեռահաղորդակցության միջոցների խափանումները և սերվերների անհասանելիությունը, որոնք գտնվում են Կատարողի կողմից շահագործվող ցանցի սահմաններից դուրս:

5.9. Կատարողը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների կիրառման արդյունքում փոխանակված տեղեկատվության բովանդակության, ճշմարտացիության, օրինականության, անվտանգության, գաղտնիության և որակի համար:

5.10. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների կապակցությամբ Կատարողը կրում է նյութական պատասխանատվություն, որը ցանկացած դեպքում չի կարող գերազանցել համապատասխան ծառայության համար Պատվիրատուի կողմից վճարած գումարը:

5.11. Պատվիրատուն կրում է պատասխանատվություն հոսթինգում տեղադրված տեղեկատվության համար:

5.12. Ցանկացած հետևանքի համար Պատվիրատուն կրում է պատասխանատվություն (այդ թվում՝ ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների և այլ մտավոր սեփականության իրավունքի խախտում), որը կարող է առաջանալ դոմեն անվան օգտագործումից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

5.13. Ցանկացած վնասի համար Պատվիրատուն կրում է պատասխանատվություն (այդ թվում՝ ուղղակի և/կամ անուղղակի), որոնք կարող են վերաբերել իրեն կամ երրորդ կողմին սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Պատվեր-Հայտում բերված հոսթինգ ծառայություններից օգտվելու կամ դրա անհնարինության դեպքում:

5.14. Կատարողը պատասխանատվություն չի կրում վեբ-սերվերի աշխատանքների դադարի համար, եթե դա տեղի է ունեցել երրորդ կողմի մեղքով, ինչպես նաև Կատարողի կողմից չվերահսկվող իրադարձությունների, մասնավորապես՝ Ինտերնետի հաղորդակցության ենթակառուցվածքների անկայունության պատճառով:

5.15. Սույնով Պատվիրատուն ընդունում է, որ Կատարողը չի վերահսկում Ինտերնետ միջազգային համակարգչային ցանցը, այս իսկ պատճառով չի կարող տալ ոչ մի երաշխիք Ինտերնետ ցանցի որակի, հասանելիության, հուսալիության, ինչպես նաև Պատվիրատուի խնդիրների լուծմանն ուղղված հոսթինգի օգտագործման ճշգրիտ համապատասխանության համար:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2019 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է այդ պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը,

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն **կետով սահմանված հրապարակվելուն** հաջորդող օրվանից:

7.10. Պայմանագրի **կապակցությամբ** ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Պայմանագիրը կազմված է 6 (վեց) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածներ №№ 1-ը, 2-ը, 3-ը, 3.1-ը և 4-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Բնապահպանության նախարարություն	**«ՋիէնՍի-Ալֆա» ՓԲԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Խաղաղության փ. 1
ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 1930011980040100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00096001
Բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ	«ՋիէնՍի-Ալֆա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ժ.Ջիլավյան	***Հ.Ֆարամազյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված №1
«25» «01» 2019թ. կնքված
«ԲՆ-ԾՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Բնապահպանության նախարարության
գլխավոր քարտուղարի ժ/պ
Վ.Ջիլավյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՋիԷԼՍի-Ալֆա» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն
Հ.Ֆարամազյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գին	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը
1	72411700	**Հոսթինգ ծառայություններ** • POP3/IMAP E-mail հասցեներ՝ 200 • Կոշտ սկավառակի տարածք՝ 20 Gb • Ամսական թողունակություն՝ անսահմանափակ • Apache, PHP, MySQL, PostgreSQL՝ Այո • Տվյալների բազաների քանակ՝ անսահմանափակ • FTP հաշիվներ՝ անսահմանափակ • Հավելյալ դոմեններ՝ 10 • Սուբդոմեններ՝ անսահմանափակ • Մեկ քլիքով տեղադրվող սկրիպտերի փաթեթ՝ Այո • Օպերացիոն համակարգ՝ Linux • Կառավարման պանել՝ Cpanel • «ԴՈՍ» հարձակումներից պաշտպանության տեխնիկական նվազագույն պահանջները՝ ՀՀ կառավարության 20.10.2016թ. «Պետական մարմինների կողմից «Ինտերնետ կապի տրամադրում» ծառայության գնման գործընթացին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» 1069-Ն որոշմամբ սահմանված:	դրամ	200 000	1	ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	01.01.2019 - 31.12.2019 թթ.

Հավելված №2
«25» «01» 2019թ. կնքված
«ԲՆ-ԾՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Բնապահպանության նախարարության
գլխավոր քարտուղարի ժ/պ
Վ.Ջիլավյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՋիէնՍի-Ալֆա» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն
Հ.Ֆարամազյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72411700	Հոսթինգ ծառայություններ	-	16 700	33 400	50 000	67 000	84 000	100 000	117 000	134 000	200 000	200 000	200 000	**200 000**

Հավելված №3
«25» «01» 2019թ. կնքված
«ԲՆ-ԾՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Բնապահպանության նախարարություն	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Խաղաղության փ.
ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 1930011980040100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00096001

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պեկության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «25» «01» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ ԲՆ-ԾՁԲ-19/04
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2019թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք են հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №3.1
«25» «01» 2019թ. կնքված
«ԲՆ-ԾՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «25» «01» 2019 թվականին կնքված № ԲՆ-ԾՁԲ-19/04 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2019 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն